

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն, «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1307-Լ և «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշումներով:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՕ-206-Ն ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք): Օրենքը ներկայիս խմբագրմամբ չի ապահովում պաշտոնատար անձանց հայտարարագրման հետ կապված իրավահարաբերությունների ամբողջական կարգավորումը:

Ներկայիս կարևոր խնդիրներից մեկը հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող այն պաշտոնատար անձանց համապարփակ շրջանակի սահմանումն է, ում գործունեությունը պարունակում է որոշակի ռիսկայնություն: Օրենքում կատարված մի շարք փոփոխությունների արդյունքում ներկայումս հայտարարագիր ներկայացնում են շուրջ 5000 պաշտոնատար անձ:

Սակայն տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոնատար անձանց որոշակի շրջանակ ազատված է հայտարարագրման պարտականությունից: Մասնավորապես խոսքը համայնքի ավագանու անդամների և աշխատակազմերի քարտուղարների մասին է: Նշված պաշտոնատար անձանց գործունեության արդյունքում կարող են առաջանալ հնարավոր շահերի բախման կամ այլ իրավիճակներ, ուստի, նման ռիսկերը վերահսկելի դարձնելու համար անհրաժեշտ է ընդլայնել հայտարարատուների շրջանակը՝ ներառելով նաև վերոնշյալ պաշտոնատար անձանց:

Ճշգրտման կարիք ունեն նաև հայտարարագրման ենթակա գույքի տեսակները, ուստի, անհրաժեշտություն է առաջացել հստակեցնել այդ շրջանակը: Օրենքի ներկա խմբագրությամբ հայտարարատու պաշտոնատար անձինք փաստացի տիրապետվող գույքի մասին տեղեկատվություն ներկայացնելու պարտավորություն չեն կրում: Սույն խնդրի լուծման կարևորությունը բազմիցս շեշտվել է միջազգային կազմակերպությունների և փորձագետների կողմից: Այս ճանապարհով հայտարարատու պաշտոնատար անձինք հաճախ թաքցնում են փաստացի իրենց պատկանող գույքը՝ այն ձևակերպելով որպես այլ անձանց սեփականություն: Սույն խնդիրն առավել ցայտուն է դրսևորվում անշարժ և թանկարժեք գույքի, տրանսպորտի միջոցների պայմաններում: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ անձը կարող է ձևականորեն զրկված լինել գույքի ճակատագիրը որոշելու հնարավորությունից, սակայն, տվյալ գույքը տիրապետելու միջոցով, դրանից ունենալ տնտեսական շահ: Գույքի օգտագործման արդյունքում ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները) պատկանում է այդ գույքն օրինական հիմունքներով օգտագործող անձին: Ուստի, անհրաժեշտ է հայտարարագրումն իրականացնելիս հաշվի առնել նաև գույքի տիրապետումը որպես սեփականության իրավունքի տարր: Միաժամանակ առկա է նաև իրավիճակ, երբ անձը, որևէ իրավունք չունենալով գույքի նկատմամբ, հանդիսանում է վերջինիս իրական սեփականատերը:

Գույքի փաստացի տիրապետման վերաբերյալ կարգավորումներ են ներդրվել մի շարք պետությունների կողմից: Այսպես, Էստոնիայի օրենսդրությամբ նախատեսվում է, որ հայտարարագրման է ենթակա ոչ միայն այն անշարժ գույքը, որը պատկանում է հանրային ծառայողին սեփականության իրավունքով, այլև

նախորդ տարվա ընթացքում առնվազն վեց ամիս նրանց փաստացի տիրապետման ներքո գտնվող անշարժ գույքը, ինչպես նաև պետական գրանցում ստացած տրանսպորտային միջոցները:¹ Ուկրաինայում,² Կոռուպցիայի կանխարգելման մասին օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայտարարագրման են ենթակա երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող՝ 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-8-րդ կետերով նշված գույքը (անշարժ գույքը, թանկարժեք գույքը, այդ թվում՝ տրանսպորտային միջոցները, արժեթղթերը, էլեկտրոնային ակտիվները և այլն), եթե հայտարարատուն կամ նրա ընտանիքի անդամը ստանում է եկամուտ կամ ունի նման իրավունք, կամ ուղղակի և անուղղակի ձևով տնօրինում է այդ գույքը: Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամի կողմից տիրապետվող կամ օգտագործվող հայտարարագրման ենթակա գույքի մասին տեղեկատվությունը լրացվում է, եթե այդ գույքը գտնվել է նրանց տիրապետության կամ օգտագործման ներքո հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ կամ նշված շրջանի կեսը: Փաստացի տիրապետվող գույքի հայտարարագրման պահանջ առկա է նաև Լիտվայի օրենսդրությամբ: «Հանրային ծառայողների գործունեության ընթացքում շահերի բախման կանխարգելման մասին» օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հայտարարագրման են ենթակա նաև տիրապետման և օգտագործման իրավունքով հայտարարատուին պատկանող անշարժ գույքը (նաև եթե նման իրավունքի առկայությունը պայմանավորված է խնամակալության և հոգաբարձության հանգամանքով) և տրանսպորտային միջոցները:

Վերանայման կարիք ունի նաև գույքը հայտարարագրելիս ներկայացվող տեղեկատվությունը: Ներկայիս կարգավորումներով սահմանված են անշարժ գույքի, տրանսպորտային միջոցների, արժեթղթերի և հանձնված կամ վերադարձված փոխառությունների վերաբերյալ որոշակի տեղեկատվության ներկայացման պահանջ, ինչն անհրաժեշտ գործիք է հնարավոր կոռուպցիոն ռիսկերի բացահայտման տեսանկյունից: Գույքի հայտարարագրման շրջանակներում վերանայման կարիք ունի նաև Օրենքով սահմանված թանկարժեք գույքի դրամական շեմը: Ներկայիս կարգավորմամբ թանկարժեք գույքի դրամական չափը

¹ <https://rm.coe.int/fifth-evaluation-round-preventing-corruption-and-promoting-integrity-i/1680900551> էջ 27

² <https://zakon.rada.gov.ua/laws/show/1700-18#n449>

սահմանվում է 8 մլն. ՀՀ դրամ: Այս արժեքային շենքը շատ բարձր է, ինչով պայմանավորված՝ հայտարարագրման ենթակա գույքի շրջանակն ընդգրկուն չէ:

Ներկայումս պաշտոնատար անձինք հայտարարագրում են իրենց գույքի, եկամուտների և շահերի վերաբերյալ տեղեկատվությունը: Ընդ որում, հայտարարագրման է ենթակա ոչ թե ամբողջ, այլ օրենքով նախատեսված տեղեկատվությունը: Արդյունքում լիազոր մարմնի կողմից ստացված տեղեկատվությունը բավարար չէ պաշտոնատար անձի գույքային դրության մասին ամբողջական պատկերացում ձևավորելու համար: Շատ հաճախ անհրաժեշտ է լինում ստանալ տեղեկատվություն նաև հայտարարատու պաշտոնատար անձի կողմից կատարված ծախսերի վերաբերյալ: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ անօրինական ճանապարհով ստացված միջոցները հնարավոր է օգտագործել այնպիսի եղանակով, որ ստացված արդյունքները չարտացոլվեն հայտարարագրում, օրինակ՝ մի շարք ծառայություններից օգտվելիս, հանգստյան, ուսման համար վճարումներ կատարելիս: Ծախսերի հայտարարագրումը տարբեր երկրներում իրականացվում է տարբեր կերպ: Ուկրաինայում հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով³: Օրենքի համաձայն պաշտոնատար անձինք պարտավոր են նաև հայտարարագրել իրենց ծախսերը, այդ թվում՝ հաշվետու շրջանում կատարված բոլոր գործարքները, որոնց արդյունքում անձի մոտ ծագում կամ դադարում են գույքային իրավունքներ, առաջանում են ֆինանսական այլ պարտավորություններ: Նույն կարգավորման համաձայն ծախսերը հայտարարագրվում են եթե դրանց չափը գերազանցում է նվազագույն սպառողական զանբյուրի 50-ապատիկը: Հայտարարագրում նշվում են գործարքի ձևի և առարկայի, ծախսի չափի վերաբերյալ տեղեկատվությունը: Լիազոր մարմնի պահանջով հայտարարատուն նաև պարտավորվում է ներկայացնել գործարքի մյուս կողմի վերաբերյալ տեղեկատվություն: Վրաստանի «Շահերի բախումը և կոռուպցիան հանրային ծառայությունում»⁴ օրենքի համաձայն հայտարարագրման են ենթակա բոլոր ծախսերը, որոնք գերազանցում են հինգ հազար լարի գումարային շենք: Բուլղարիայում պաշտոնատար անձինք պարտավոր են հայտարարագրել իրենց

³ <https://zakon.rada.gov.ua/laws/show/1700-18#n449>

⁴ <https://matsne.gov.ge/ru/document/view/33550?publication=71>

ֆինանսական պարտավորությունները և ծախսերը: Հայտարարագրման են ենթակա տեղական արժույթով և արտարժույթով արտահայտված կանխիկ դրամական ակտիվները և պարտավորությունները, որոնք գերազանցում են 2 500 եվրոն: Հայտարարագրման են ենթակա նաև 250 եվրոն գերազանցող ճանապարհորդության, կրթության համար կատարված և այլ ծախսերը⁵: ԱՄՆ-ում հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են 1978 թվականի «Գործադիր իշխանության բարեվարքության» մասին ակտով: Ակտի կարգավորումների համաձայն Պաշտոնատար անձինք պարտավոր են էթիկայի հարցերով զբաղվող հանձնաժողով ներկայացնել իրենց և իրենց մերձավոր ազգականների (երեխաներ, ամուսին, ծնողներ) եկամուտների և ծախսերի մասին տեղեկատվություն⁶: Հայտարարագրումը ներառում է նաև եկամտի բնույթի, աղբյուրի և քանակի նվերների և փոխհատուցումների, իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև անշարժ գույքի կապակցությամբ կատարված փոխանցումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում: Ըստ էթիկայի հարցերով զբաղվող հանձնաժողովի պարզաբանման, հայտարարագրման են ենթակա, օրինակ՝ հայտարարատուի կողմից իր անչափահաս երեխայի ուսումնական վճարների համար որպես ավանդ ներդրած գումարը, հայտարարատուի կնոջ կողմից ընտանեկան հանգստի համար կատարած ծախսերը և այլն⁷: Ռուսաստանի Դաշնության «Կոռուպցիայի հակազդման մասին» օրենքի 8.1 «ծախսերի հայտարարագրումը» հոդվածով այլ ծախսերին զուգահեռ նախատեսվում է նաև անշարժ գույքի, տրանսպորտային միջոցների և արժեթղթերի ձեռքբերման ֆինանսական աղբյուրների վերաբերյալ տեղեկատվության բացահայտման պահանջ⁸: Հայտարարագրման են ենթակա հաշվետու ժամանակահատվածում պաշտոնատար անձի եկամուտների 20 և ավելի տոկոսը կազմող ծախսերը, բացառությամբ 100 000 ռուբլին չգերազանցող ծախսերի:

⁵ <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806c983f>

⁶ <http://tikazakhstan.org/deklarirovanie-dohodov-i-rashodov-chego-vse-boyatsya/>

⁷ https://ethics.house.gov/financial-disclosure/specific-disclosure-requirements#fd_footnote28

⁸ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_82959/

Ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պահանջ սահմանվում է նաև Ալբանիայի⁹, Լիտվայի,¹⁰ Արգենտինայի¹¹ և այլ երկրների օրենսդրական կարգավորումներում: Նշված երկրներում, չնայած որոշ տարբերությունների, ծախսերի հայտարարագրումը ուղղված է անշարժ գույքի, կրթության, հանգստի, ֆինանսական պարտավորություններից բխող, ինչպես նաև այլ գույքային իրավունքների և ծառայությունների ձեռքբերմանն ուղղված ծախսերի հայտարարագրմանը: Երկրների մեծամասնությունում հայտարարագրման են ենթակա նաև հայտարարատուների մերձավոր ազգականների կողմից իրականացվող ծախսերը: Նման կառուցակարգը ուղղված է հայտարարագրման առավել արդյունավետ համակարգի ձևավորմանը:

Անհրաժեշտ է նաև ճշգրտել պաշտոնատար անձանց կողմից ստացվող փոխառությունների և վարկերի վերաբերյալ տեղեկատվությունը: Օրենքի 41-րդ հոդվածով կարգավորվում է Եկամուտների հայտարարագրումը: Սույն հոդվածով Եկամտի շարքին են դասվում նաև ստացված փոխառությունները և վարկերը: Եկամտի նշված աղբյուրները սահմանված են նույն կետում, սակայն դրանք տարբերվում են միմյանցից: Ուստի, անհրաժեշտ է հստակ միմյանցից տարանջատել փոխառությունը և վարկը՝ որպես Եկամտի ստացման առանձին աղբյուրներ:

Լրացուցիչ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ գործող կարգավորումների համատեքստում պաշտոնեական պարտականությունները դադարեցրած անձը հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունի բացառապես պաշտոնեական պարտականությունները դադարեցնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում: Միաժամանակ, գործնականում տարածված են դեպքերը, երբ անձի մոտ գույքային էական փոփոխություն տեղի է ունենում տվյալ ժամանակահատվածին հաջորդող տարիների ընթացքում: Այս առումով, միջազգային փորձի ուսումնասիրությունը հանգում է նրան, որ անձինք պաշտոնեական պարտականությունները դադարեցնելուն հաջորդող տարիների ընթացքում ևս պարտավորված են ներկայացնել հայտարարագիր:

9

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806c1be1>

¹⁰ <http://www.oecd.org/corruption/anti-bribery/47489446.pdf>

¹¹ <https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/workinggroup4/2012-August-27-29/V1254431e.pdf#page=10>

Այսպես, **Սերբիայում** հայտարարագրման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Հակակոռուպցիոն գործակալության մասին»¹² օրենքով: Օրենքի հինգերորդ՝ «գույքի բացահայտման հաղորդում» գլխում սահմանվում են հայտարարագրի տեսակները և դրանց ներկայացման կարգը: Օրենքի 44-րդ հոդվածը կարգավորում է հայտարարագրի հատուկ տեսակների հետ կապված իրավահարաբերությունները: Այս հոդվածի համաձայն.

«1. Պաշտոնատար անձը պետք է ներկայացնի հաղորդում, ոչ ուշ քան ընթացիկ տարվա հունվարի 31-ը, որում ընդգրկված են մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 31-ն ընկած տեղեկատվությունը, եթե նախկինում ներկայացված հաղորդումը կրել է էական փոփոխություններ:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված էական փոփոխություն է համարվում, տեղեկատվության ցանկացած փոփոխություն, որը գերազանցում է միջին տարեկան մաքուր եկամուտը հանրապետությունում (net income):

3. Պաշտոնատար անձը, ով դադարեցրել է իր պաշտոնավարումը, պարտավոր է տարեկան կտրվածքով ներկայացնել հաղորդում վերջին հաշվետու շրջանում ներկայացված տեղեկատվության էական փոփոխությունների վերաբերյալ պաշտոնավարումը դադարեցնելուց հետո երկու տարվա ընթացքում:»

Ղրղզստանում գույքի հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Քաղաքացիական ծառայության մասին և Ակտիվների հայտարարագրման մասին օրենքներով: Ակտիվների հայտարարագրման մասին օրենքի դրույթների համաձայն բոլոր հանրային պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են ներկայացնել հայտարարագիր պաշտոնի նշանակվելուց կամ ընտրվելուց երեսուն օր հետո, տարեկան կտրվածքով, ինչպես նաև պաշտոնը դադարեցնելուց հետո երեսուն օր հետո և դրան հաջորդող երկու տարին:¹³

Սլովենիայում պաշտոնատար անձինք պարտավոր են լրացնել գույքի և եկամուտների հայտարարագիր պաշտոնը ստանձնելուց կամ դադարեցնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում: Պաշտոնավարման դադարեցումից հետո մեկ տարի անց պաշտոնատար անձը պարտավոր է ներկայացնել հայտարարագիր: Սլովենիայում կոռուպցիայի կանխարգելման մարմնի կողմից կարող է ցանկացած ժամանակ

¹²Տե՛ս <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/>

¹³ Տե՛ս <http://documents.worldbank.org/curated/en/664561468340842190/pdf/Income-and-asset-disclosure-case-study-illustrations.pdf> էջ 139

ներկայացվել իրավիճակային (ad hoc) հայտարարագիր լրացնելու պահանջ: Պահանջը ստանալուց հետո պաշտոնատար անձը պարտավոր է 15-օրվա ընթացքում ներկայացնել լրացված հայտարարագիրը¹⁴: **Ուկրաինայում**¹⁵ հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով: Նշված օրենքի 45-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով կարգավորվում են նաև պաշտոնատար անձի կողմից պաշտոնը դադարեցնելուց հետո տրվող հայտարարագրի հետ կապված հարաբերությունները:

«1. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի Ա և Վ կետերով նշված անձինք, պարտավոր են մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի մեկը ազգային գործակալության ինտերնետային կայքում սահմանված ձևով լրացնելու պետական կամ համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց հայտարարագիր (այսուհետ՝ հայտարարագիր) նախորդ տարվա համար:

2. Օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասով, 2-րդ մասի Ա և Վ կետերով նշված անձինք, որոնք դադարեցնում են պաշտոնավարումը, լրացնում են պետական կամ համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից տրվող հայտարարագիր իրենց կողմից ներկայացված նախկին հայտարարագրում ներառված մնացած ժամանակահատվածի համար:

Անձինք որոնք դադարեցրել են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում լիազորությունները կամ սույն օրենքի Երրորդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետի Ա և Վ ենթակետով (նշված երկու ենթակետը վերաբերվում է հանրային նշանակության իրավաբանական անձանց, Կենտրոնական բանկի, պետական մասնակցությամբ ձեռնարկությունների որոշ պաշտոնատար անձանց ինչպես նաև գիտական հաստատությունների, մրցութային հանձնաժողովների ներկայացուցիչներին, անդամներին և այլն) նշված գործունեությունը իրականացնելուց, պարտավոր են լիազորությունները դադարեցնելու հաջորդ տարում սույն հոդվածի առաջին մասով սահմանված կարգով լրացնել հայտարարագիր»:

¹⁴ Տե՛ս <https://rm.coe.int/fifth-evaluation-round-preventing-corruption-and-promoting-integrity-/16807912a8> էջ 27

¹⁵ Տե՛ս https://zakon.rada.gov.ua/laws/show/1700-18?fbclid=IwAR2XTt3FCGfBUZYRTdWSsqke9c7rmi-_shlzb8O-k4eQFrcC6NaSLSBxS8
Հոդված 45 մաս 2

45-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված հայտարարագրի բովանդակությունը բացահայտվում է 46-րդ հոդվածով: Ընդ որում, և՛ պաշտոնավարման ընթացքում, և՛ պաշտոնավարումը դադարեցնելուց հետո տրվող հայտարարագրերի բովանդակությունը չի տարբերվում:

Էստոնիայում հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հակակոռուպցիոն օրենքով»:¹⁶ Օրենքի 12-րդ հոդվածով սահմանվում են հայտարարագիր ներկայացնելու դեպքերը: Պաշտոնատար անձինք հայտարարագիր են ներկայացնում պաշտոնը ստանձնելուց հետո չորս ամսվա ընթացքում, տարեկան հայտարարագիր՝ յուրաքանչյուր տարի մինչև մայիսի 31-ը: Պաշտոնատար անձը նոր պաշտոնի նշանակվելիս չի կրում նոր հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն: 12-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն պաշտոնատար անձինք հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեն մինչև պաշտոնավարումը դադարեցնելուն հաջորդող օրացուցային տարին:

Բոսնիա և Հերցոգովինայում¹⁷ հայտարարագրման պարտավորություն նախատեսվել է «Բոսնիա և Հերցոգովինայի պետական կառավարման մարմիններում շահերի բախման մասին» օրենքով: Հայտարարագրերի նկատմամբ հսկողություն իրականացնում է շահերի բախման առկայությունը որոշող հանձնաժողովը: Հայտարարագրերի ներկայացման հաճախականությունը կարգավորվում է Հանձնաժողովի ներքին իրավական ակտերով: Ըստ Հանձնաժողովի հաստատած կարգի հայտարարագրերը պետք է ներկայացվեն 1. Պաշտոնը ստանձնելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում, 2. Տարեկան հիմունքներով, մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 31-ը և որում ընդգրկվում է նախորդ տարվա վերաբերյալ տեղեկատվությունը, 3. Պաշտոնավարումը դադարեցնելուց վեց ամիս անց՝ երեսնօրյա ժամկետում և 4. Հանձնաժողովի պահանջով պաշտոնյաները պարտավոր են ներկայացնել ֆինանսական հաշվետվություններ հնարավոր շահերի բախման իրավիճակի առկայության վերաբերյալ որոշման հիման վրա:

Բուլղարիայում հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Բուլղարիայի խորհրդարանի կողմից 2018 թվականի հունվարի 12-

¹⁶ Տե՛ս <https://www.riigiteataja.ee/akt/113032019096> «Антикоррупционный закон» статья 12

¹⁷ Տե՛ս <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806c4999> էջ 18

ին ընդունված «Կոռուպցիայի դեմ պայքարի և ապօրինի ձեռք բերված ակտիվների բռնագանձման մասին» օրենքով¹⁸: Օրենքի հիման վրա ստեղծվել է հակակոռուպցիոն նոր մարմին, որը համատեղում է մի քանի գործառույթների իրականացումը՝ ակտիվների հայտարարագրման ստուգումը, շահերի բախման իրավիճակների որոշումը, և բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից ապօրինի կերպով ձեռք բերած միջոցների հայտնաբերումը: Վերոնշյալ օրենքի 38-րդ հոդվածը կարգավորում է հայտարարագրերի ներկայացման հաճախականությունը.

«1.Շահերի և ակտիվների հայտարարագիր պետք է լրացվի՝

1) Հանրային ծառայության ավագ պաշտոններ զբաղեցնելուց հետո մեկ ամսվա ընթացքում.

2) Ամեն տարի մինչև մայիսի տասնհինգը, նախորդ օրացուցային տարվա համար.

3) Պաշտոնավարումը դադարեցնելուց հետո մեկ ամսվա ընթացքում.

4) Սույն հոդվածի երրորդ կետով սահմանված հայտարարագիրը լրացնելուց մեկ տարի անց՝ մեկ ամսվա ընթացքում

2. Շահերի և ակտիվների հայտարարագիր ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում հայտարարագիր ներկայացրած անձը կարող է փոփոխել հայտարարագիրը, հայտնաբերված թերությունները կամ սխալներն ուղղելու նպատակով:¹⁹»

Վրաստանում հայտարարագրման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի և շահերի բախման մասին» օրենքով: Օրենքի ներկայիս կարգավորումներով պաշտոնատար անձինք, ներառյալ պատգամավորները Քաղաքացիական ծառայության բյուրո էլեկտրոնային եղանակով հայտարարագիր են ներկայացնում Ա. պաշտոնի նշանակվելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, Բ. պաշտոնավարման ընթացքում՝ յուրաքանչյուր տարի և, Գ. պաշտոնավարման ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում: Խորհրդարանի անդամները նաև կրում են մեկ շաբաթյա ժամկետում

¹⁸ Տե՛ս <https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/16809981f2> էջ 3

¹⁹ Տե՛ս “Counter-Corruption and Unlawfully Acquired Assets Forfeiture Act” article 38

հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն՝ ընտրություններին մասնակցելու նպատակով թեկնածությունը առաջադրելուց հետո²⁰:

Հունաստանում Խորհրդարանի անդամները օրենքով սահմանված կարգով պարտավորվում են ներկայացնել ակտիվների վերաբերյալ հայտարարագիր՝ աշխատանքային պարտականությունները ստանձնելուց կամ երդումը տալուց հետո իննսունօրյա ժամկետում, ամենամյա հայտարարագիր, որը ներկայացվում է մինչև հաջորդ տարվա հունիսի երեսունը: Խորհրդարանի անդամները պարտավոր են երեք տարի հայտարարագիր ներկայացնել նաև պաշտոնավարումը դադարեցնելուց հետո²¹:

Լատվիայում հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրում են գործադիր իշխանության գործառույթներ իրականացնող բարձրաստիճան պաշտոնյաները: Նշված պաշտոնատար անձինք ներկայացնում են տարեկան հայտարարագիր, ինչպես նաև պաշտոնի ստանձնման և դադարեցման հայտարարագիր: Առանձնահատուկ կարգավորում է գործում պաշտոնի դադարեցումից հետո տրվող հայտարարագրերի հետ կապված: Երկրի վարչապետը, նախարարները, ներառյալ հատուկ կարգով նշանակված պաշտոնյաները և խորհրդարանական քարտուղարները պաշտոնավարումը դադարեցնելուց հետո պարտավոր են ևս 24 ամսվա կտրվածքով ներկայացնել հայտարարագիր, եթե նրանք պաշտոնավարել են երեք ամսից ավելի²²:

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով կարգավորվում է հայտարարագրում փոփոխություն կատարելու հետ կապված իրավահարաբերությունները: Մասնավորապես՝ հայտարարատու պաշտոնատար անձը, նրա ընտանիքի անդամը հանձնված և հրապարակված հայտարարագրում իրենց հայտնաբերած անհամապատասխանությունը վերացնելու նպատակով կարող են դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: ԵՎ միայն Հանձնաժողովի կողմից դիմումը բավարարվելու դեպքում հայտարարագրում

²⁰Տե՛ս <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806dc116> էջ 18

²¹Տե՛ս <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806c648b> էջ 20

²² Տե՛ս <https://rm.coe.int/fifth-evaluation-round-preventing-corruption-and-promoting-integrity-/16808cdc91> էջ 24

անհամապատասխանությունը վերացնելու համար ժամկետ է տրամադրվում, որը չի կարող գերազանցել յոթ աշխատանքային օրը:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ փաստորեն սույն օրենքում առկա է բաց, այն պատճառաբանությամբ, որ օրենքով չի կարգավորվում այն դեպքը, երբ հայտարարատու պաշտոնատար անձը կամ նրա ընտանիքի անդամը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացրել հայտարարագիր, սակայն այն դեռևս չի հրապարակվել: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված է պատասխանատվություն հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու համար, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով՝ հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով սահմանված ժամկետներում չներկայացնելու կամ հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու կամ հայտարարագրերում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար:

Ուստի, կարծում ենք, որ օրենքի բացը անթույլատրելի է, մանավանդ երբ այդ իրավահարաբերությունները խախտելու համար սահմանված է վարչական և քրեական պատասխանատվություն: Մինևույն ժամանակ, նման իրավակարգավորում սահմանելու անհրաժեշտությունը բխում է նաև միջազգային պրակտիկայից:

Ուկրաինայում հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով: Օրենքի 45-րդ հոդվածով սահմանվում են հայտարարագրման պարտականություն ունեցող անձանց շրջանակը, հայտարարագիր ներկայացնելու կարգը և այլն: 45-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձը հայտարարագիր ներկայացնելուց հետո 7-օրյա ժամկետում կարող է հայտարարագրում կատարել ուղղումներ, բայց ոչ ավելի քան 3 անգամ: Այն դեպքում երբ հայտարարագիր ներկայացնող պաշտոնատար անձին ենթարկում են վարչական պատասխանատվության հայտարարագիր չներկայացնելու, տեղեկատվության անհամապատասխանության համար կամ երբ հայտարարագրում հայտնաբերվում են ոչ հավաստի տեղեկատվություն, վերջինիս լիազոր մարմինը պարտավորեցնում է ներկայացնել հավաստի տեղեկատվություն: Օրենքի 49-րդ և 50-րդ հոդվածներով սահմանվում են

հայտարարագրերի ստուգման կարգը: Հայտարարագրերի թե՛ ոչ լրիվ, և թե՛ ամբողջական ստուգումների դեպքում լիազոր մարմինը անձշտություններ հայտնաբերելու պարագայում հայտարարատուին հնարավորություն է տալիս 10-օրյա ժամկետում ներկայացնել ճշտված տեղեկատվություն:

Լատվիայում հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոնատար անձանց գործունեությունում շահերի բախման կանխարգելման» մասին օրենքով: Օրենքի 25-րդ հոդվածով սահմանվում են հայտարարագրման ժամկետները: 25-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն ներկայացված հայտարարագրերը կարող են ճշգրտվել լիազոր մարմնին ուղղված գրավոր դիմումի հիման վրա: Լիազոր մարմնին ուղարկվում է նաև հայտարարագրի համապատասխան հատվածի ուղղված տարբերակը՝ իր հիմնավորմամբ: Փոփոխությունը կարող է արվել հայտարարագիրը լիազոր մարմնի կողմից հրապարակելուց հետո ոչ ուշ քան մեկամսյա ժամկետում:

Վրաստանում գործող «Հանրային մարմիններում շահերի բախման և կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 14-րդ հոդվածով կարգավորվում է հայտարարագրերի ներկայացման կարգը և ժամկետները: 14 -րդ հոդվածի 12-րդ կետի համաձայն լիազոր մարմինը իրավասու է հայտարարագրի ներկայացման նույն հոդվածով սահմանված ժամկետների շրջանակում հայտարարատու անձին տրամադրել լրացուցիչ 48 ժամյա ժամկետ՝ ներկայացված տվյալների խմբագրման համար:

Բուլղարիայում գործող «Հակակոռուպցիոն և ապօրինի ծագում ունեցող ակտիվների բռնագանձման մասին» ակտի 38-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների համաձայն՝ հայտարարատու անձը հայտարարագիր ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում կարող է կատարել փոփոխություններ հայտարարագրում, եթե դա կապված է հայտարարագրում առկա թերությունների կամ սխալների ուղղման հետ:

Սլովենիայում հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության մասին» ակտով: Ակտի 44-րդ հոդվածի համաձայն՝ եթե լիազոր մարմինը գտնում է, որ հայտարարատու անձի հայտարարագիրը չի բավարարում օրենքով սահմանված պահանջներին կարող է վերջինից պահանջել ոչ պակաս քան 15 և ոչ ավելի քան 30

օրում լրացնել պահանջվող տեղեկատվությունը: Եթե հայտարարատու անձը նշված ժամկետում չի ներկայացնում պահանջվող տեղեկատվությունը, լիազոր մարմինը կիրառում է օրենքով սահմանված կարգապահական ներգործության միջոց:

Հունգարիայում ակտիվների հայտարարագրերի պաշտոնական ստուգման գործընթաց գոյություն չունի: Հայտարարագրերը հրապարակվում են էլեկտրոնային եղանակով և այդպիսով բաց են հասարակության առաջ: Յուրաքանչյուրը կարող է բողոքներ ներկայացնել անդամների հայտարարագրերում առկա խախտումների վերաբերյալ: Բողոքի հիմնավորվածության դեպքում հարուցվում է վարույթ, որի շրջանակներում հայտարարտուին տրամադրվում է հնգօրյա ժամկետ՝ շտկելու հայտարարագիրը: Եթե սահմանված ժամկետում հայտարարատու պաշտոնատար անձի կողմից հայտարարագրում առկա տեղեկատվությունը չի շտկվում ապա նրա նկատմամբ կարող է կիրառվել կարգապահական պատասխանատվություն՝ ընդհուպ մինչև պաշտոնավարման դադարեցում:

Սերբիայում գործող «Հակակոռուպցիոն գործակալության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պաշտոնատար անձը պարտավոր է պաշտոնը ստանձնելուց հետո 30 օրյա ժամկետում ներկայացնել հայտարարագիր իր և ընտանիքի անդամների վերաբերյալ: Նույն օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտոնատար անձը ներկայացնում է հաշվետվություն ոչ ուշ, քան ընթացիկ տարվա հունվարի 31-ը, նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գույքային դրության վերաբերյալ, եթե տեղի են ունեցել էական փոփոխություններ նախկինում ներկայացված հայտարարագրում:

ԱՄՆ-ում հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Էթիկան կառավարությունում» ակտով: Սույն ակտի 101-րդ հոդվածով սահմանվում է հայտարարատուների շրջանակը, հայտարարագրման ժամկետները և այլն: 101 -րդ հոդվածի ց) կետի համաձայն՝ լիազոր մարմինը կարող է հայտարարատուին տրամադրել լրացուցիչ ժամկետ հայտարարագիրը լրացնելու համար, որը չի կարող գերազանցել 19 օրը, որը սակայն չի ենթադրում ներկայացված հայտարարագրի փոփոխություն:

Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում լրացված տվյալների և սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված տվյալների համադրության արդյունքում

Հանձնաժողովն իրավասու է թեկնածուից պահանջելու և ստանալու պարզաբանումներ:»:

Գործող կարգավորումների համաձայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը օժտված է բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների բարեվարքության ստուգման լծակներով և մեխանիզմներով: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ թեկնածուները որևէ կերպ օրենքով չեն ներգրավված այս գործընթացին, այնինչ նրանց մասնակցությունը, այն է՝ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում լրացված տվյալների առնչությամբ պարզաբանումներ ներկայացնելու իրավակարգավորման սահմանումը, կարծում ենք՝ կարող է էական դեր խաղալ այս գործընթացի համաչափության ապահովման տեսանկյունից:

Նմանատիպ իրավակարգավորումներ առկա են նաև օտարերկրյա փորձում:

Այսպես, Ուկրաինայում դատավորների և դատախազների թեկնածուների բարեվարքության ստուգումը իրականացվում է ինչպես «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով, այնպես էլ «Դատական համակարգի և դատավորների կարգավիճակի մասին»²³ «Դատախազության մասին»²⁴ և այլ օրենքներով: «Դատախազության մասին» օրենքի 32-րդ հոդվածի համաձայն դատախազների այն թեկնածուները, որոնք հաջողությամբ անցել են որակավորման քննությունները «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով սահմանված կարգով անցնում են հատուկ ստուգում: Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն, եթե թեկնածուի վարքագծի և բարեվարքության վերաբերյալ ստացվում է բացասական տեղեկատվություն, կարգապահական վարույթ իրականացնող մարմինը դատախազի թեկնածուի մասնակցությամբ քննարկում է ստացված տեղեկատվությունը: Թեկնածուն ունի իրավունք ծանոթանալու այդ տեղեկատվության հետ և ներակայացնելու բացատրություններ: Թեկնածուն կարող է ընդունել կամ ժխտել ներկայացված տեղեկատվությունը: Հարուցված վարույթի ընթացքում կարգապահական վարույթ իրականացնող մարմինը կարող է ընդունել որոշում՝ արգելելով թեկնածուին մասնակցել նշանակման համար անցկացվող հետագա փուլերին: Փաստորեն

²³ <https://zakon.rada.gov.ua/laws/show/1402-19>

²⁴ <https://zakon.rada.gov.ua/laws/show/1697-18>

դատախազի թեկնածուները օրենքով ունեն իրավունք ծանոթանալու իրենց վերաբերյալ ստացված տեղեկատվությանը և ներկայացնելու բացատրություններ:

Ալբանիայում բարեվարքության ստուգման համակարգ ներդրված է նաև դատավորների և դատախազների թեկնածուների նշանակման ժամանակ «Ալբանիայի Հանրապետության Դատավորների և դատախազների կարգավիճակի մասին»²⁵ օրենքով: Օրենքի 32-րդ հոդվածը կարգավորում է թեկնածուների բարեվարքության ստուգման հետ կապված հարաբերությունները: Խորհուրդը յուրաքանչյուր դիմորդի ակտիվների և բարեվարքության ստուգման նպատակով հայցում է տեղեկատվություն Ակտիվների և շահերի բախման աուդիտի և դեկլարացիայի բարձրագույն տեսչությունից, Գլխավոր դատախազությունից, Ֆինանսական, հարկային գործառույթներ իրականացնող մարմիններից, Հետաքննության ազգային բյուրոյից, Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պետական մարմիններից:

Խորհրդի պահանջով պետական և ոչ պետական մարմինները պարտավոր են սահմանված ժամկետում ներկայացնել տեղեկատվություն, փաստաթղթեր և այլ անհրաժեշտ նյութեր, որոնք անհրաժեշտ են թեկնածուի բարեվարքության ստուգման համար: Խորհրդի որոշումը թեկնածուն կարող է բողոքարկել իրավասու դատարան հինգ օրվա ընթացքում: Թեկնածուն իրավունք ունի ծանոթանալ իր վերաբերյալ հավաքված նյութերին: Դատարանը բողոքը քննում է երկշաբաթյա ժամկետում:

Բելգիայում բարեվարքության ստուգման ենթարկվում են Ոստիկանությունում պաշտոնների նշանակելու համար դիմած անձինք: Բարեվարքության ստուգումը ենթադրում է նաև ներքին միջավայրի և բարեվարքության ստուգում, որը նաև ներառում է թեկնածուի հետ հարցազրույցի անցկացում նրա տանը կամ բնակության վայրում՝ տեղի ոստիկանության կողմից²⁶:

Լիտվայի վերաբերյալ Եվրամիության կողմից կատարված ուսումնասիրությունը²⁷ փաստում է, որ «Դատարանների մասին» Լիտվայի օրենքի²⁸ 53(2) հոդվածի

²⁵ http://rai-see.org/wp-content/uploads/2019/04/Albania_law_status_judges_prosecutors_2017_en.pdf

²⁶ https://rm.coe.int/fifth-evaluation-round-preventing-corruption-and-promoting-integrity-i/1680998a40_t238

²⁷ https://www.transparency.it/wp-content/uploads/2015/10/nis_lithuania_full_report_EN.pdf

²⁸ Տե՛ս <https://www.teismai.lt/en/courts/judicial-system/650> կայքում առկա օրենքի word տարբերակը

համաձայն թեկնածուն ներկայացնում է տվյալ օրենքով նշված փաստաթղթերը և լրացնում է հարցաթերթիկ: Ներկայացված հարցաթերթիկն ուսումնասիրվում է Հանձնաժողովի (State Security Department) կողմից: Անհրաժեշտության դեպքում թեկնածուն կարող է հրավիրվել դատական դեպարտամենտ բացատրություններ և հավելյալ տեղեկատվություն ներկայացնելու համար: Դատական դեպարտամենտը պետք է կայացնի պատճառաբանված որոշում: Նույն հոդվածի հաջորդ մասերում նշվում է, թե վերոգրյալի արդյունքում դատական դեպարտամենտն ինչ որոշումներ կարող է կայացնել: Եթե վերջինս հանգում է եզրակացության, որ ձեռք բերված տեղեկատվությունը բավարար է թեկնածությունն ընդունելու համար, թեկնածուն ներառվում է համապատասխան ցուցակներում: Հարկ է ընդգծել, որ Լիտվայում գործող կարգավորումների համաձայն հարցաթերթիկի վերլուծության արդյունքում Հանձնաժողովի կողմից տրված բացասական եզրակացությունն առանձին հիմք է թեկնածուին համապատասխան ցուցակում չընդգրկելու համար, ուստի նման եզրակացությունն այլևս չի կարող հանդիսանալ խորհրդատվական բնույթ կրող և ընթացակարգային փաստաթուղթ:

ԵԱՀԿ փորձագետների կարծիքով իրավաչափ է այն կարգավորումը, որ թեկնածուները խորհրդատվական եզրակացությանը ծանոթանալու հնարավորություն չունեն: Սակայն, եթե թեկնածուները տեղյակ են իրենց նկատմամբ իրականացվող բարեվարքության ստուգման գործընթացից, կամ այդ առնչությամբ տվել են իրենց համաձայնությունը, ըստ ԵԱՀԿ փորձագետների, արդյունավետ և իրավաչափ է բարեվարքության ստուգման գործընթացում համապատասխան թեկնածուի ներգրավումը: Ժամանակաի խնայողության տեսակնյունից նման կարգավորումը ևս նպատակահարմար է: Թեկնածուն ունենալով փաստարկներ ներկայացնելու հնարավորություն՝ կարող է փոխել խորհրդատվական եզրակացության արդյունքները: Այլ կերպ ասած՝ նման եղանակով թեկնածուն վիճարկում է տարբեր մարմինների կողմից Հանձնաժողովին ներկայացրած տեղեկատվությունը:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26.1-րդ հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովը բարեվարքությունը ուսումնասիրելիս իրականացնում է նաև անձի քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրություն: Միևնույն ժամանակ սույն օրենքով սահմանված չէ, թե ինչ է ներառում քրեական ենթամշակույթին հարելու

հնարավորության ուսումնասիրությունը: Կարծում ենք, որ օրենքի իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից նման ձևակերպումը կարող է պրակտիկ խնդիրներ առաջացնել:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն օրենսդրական փոփոխությունների արդյունքում լիազորվել է իրականացնել բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն, որը ենթադրում է նաև անձի քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրություն, անձի գույքային դրության՝ փաստացի ստացած եկամուտներին համապատասխանության ուսումնասիրություն: Ուստի հարց է առաջանում, թե ինչպիսի լծակներով է իրականացվելու անձի գույքի փաստացի տիրապետումը պարզելուն ուղղված գործողությունները, այն պարագայում երբ օրենքով այդ իրավահարաբերությունները կարգավորված չեն:

Հարկ է նշել, որ օտարերկրյա փորձը վկայում է, որ նման գործընթացին ներգրավվում են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները:

Բարեվարքության ստուգումը Ուկրաինայում իրականացվում է օրենսդրական տարբեր ակտերի միասնական համակարգի միջոցով: Հիմնական իրավական ակտը, որը հիմք է հանդիսանում բարեվարքության ստուգման համար, դա «Կոռուպցիայի կանխարգելման մասին»²⁹ ակտն է: Սույն իրավական ակտի հիման վրա ստեղծվել է հակակոռուպցիոն մարմին՝ «Կոռուպցիայի կանխարգելմամբ զբաղվող ազգային գործակալությունը»: Գործակալությունը իրականացնում է կոռուպցիայի կանխարգելման գործառույթներ: Օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածներով սահմանվում են Գործակալության լիազորությունները և իրավունքները: Գործակալությունը Օրենքի 50-52 հոդվածներով սահմանված կարգով իրականացնում է կյանքի պայմանների ստուգում, հայտարարագրերի ամբողջական ստուգում, որի ընթացքում իրականացվում է նաև շահերի բախման առկայության, ինչպես նաև ապօրինի հարստացման հատկանիշների առկայության վերաբերյալ ուսումնասիրություն, ինչպես նաև ակտիվների հիմնավորվածության ստուգում: Նման ստուգումը կարող է իրականացվել նաև պաշտոնավարման ավարտից հետո:

Գործակալությունը իր լիազորությունները պատշաճ իրականացնելու նպատակով համագործակցում է Ազգային հակակոռուպցիոն բյուրոյի հետ:

²⁹ <https://zakon.rada.gov.ua/laws/show/1700-18#n449>

«Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոյի մասին»³⁰ օրենքի 19²-րդ հոդվածի համաձայն, Ազգային հակակոռուպցիոն բյուրոն կարող է պետական այլ մարմինների հետ կնքել տեղեկատվության փոխանակման վերաբերյալ համաձայնագրեր: Սակայն Գործակալությանը օպերատիվ հետախուզական տեղեկատվություն փոխանցելու պարտականություն Ազգային հակակոռուպցիոն բյուրոյի մասին օրենքով ուղղակիորեն ամրագրված չէ: Գործակալությունը Ուկրաինայի «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին»³¹ օրենքով չունի օպերատիվ հետախուզական գործառույթներ իրականացնելու լիազորություն: Այսպիսով Հակակոռուպցիոն գործակալությունը օրենքի շրջանակում չունի օպերատիվ հետախուզական գործառույթներ իրականացնելու կամ նման լիազորություններով օժտված մարմիններից նմանատիպ տեղեկատվություն ստանալու ուղղակի իրավունք: Սակայն Հակակոռուպցիոն ազգային բյուրոյի հետ հնարավոր է կնքել ներգերատեսչական իրավական ակտ տեղեկատվության փոխանակման վերաբերյալ:

Ալբանիայում բարեվարքության ստուգման համակարգ ներդրված է նաև դատավորների և դատախազների թեկնածուների նշանակման ժամանակ: «Ալբանիայի Հանրապետության Ղատավորների և դատախազների կարգավիճակի մասին»³² օրենքով: Օրենքի 32-րդ հոդվածը կարգավորում է թեկնածուների բարեվարքության ստուգման հետ կապված հարաբերությունները: Ըստ այս հոդվածի անցկացված քննություններում ամենաբարձր միավոր հավաքած անձինք, ովքեր տվել են համաձայնություն Մագիստրատների դպրոցում վերապատրաստում անցնելու վերաբերյալ, ենթարկվում են ակտիվների և բարեվարքության ստուգման: Խորհուրդը յուրաքանչյուր դիմորդի ակտիվների և բարեվարքության ստուգման նպատակով հայցում է տեղեկատվություն Ակտիվների և շահերի բախման աուդիտի և դեկլարացիայի բարձրագույն տեսչությունից, Գլխավոր դատախազությունից, Ֆինանսական, հարկային գործառույթներ իրականացնող մարմիններից, Հետաքննության ազգային բյուրոյից, Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պետական մարմիններից: Թեկնածուի հետագա ուսումնառությունը մերժվում է, եթե նրա ակտիվները չեն հիմանվորվում օրինական ճանապարհով

³⁰ <https://zakon.rada.gov.ua/laws/show/1698-18>

³¹ <https://zakon.rada.gov.ua/laws/show/2135-12>

³² http://rai-see.org/wp-content/uploads/2019/04/Albania_law_status_judges_prosecutors_2017_en.pdf

ստացվող եկամուտներով, կամ Օպերատիվ հետախուզական մարմիններից և Հետաքննության ազգային բյուրոյից ստացվել է տեղեկատվություն, համաձայն որի թեկնածուն ունի կապվածություն կազմակերպված հանցավորության հետ կամ առկա է օրենքով սահմանված մերժման այլ հիմքեր:

Բելգիայում բարեվարքության ստուգման ենթարկվում են Ոստիկանությունում պաշտոնների նշանակելու համար դիմած անձինք: Բարեվարքության ստուգումը իրականացվում է անվտանգության ծառայությունում անձի վերաբերյալ առկա հասանելի տեղեկատվության հիման վրա:

Եվրոպայի խորհրդի փորձագետների կարծիքով եթե ազգային անվտանգության ծառայության միջոցով է ձեռք բերվելու նման տեղեկատվություն, ապա ստուգման գործընթացը պետք է սահմանափակվի հանցավոր շրջապատի հետ գոյություն ունեցող կապերի ճշգրտմամբ: Միևնույն ժամանակ, գործընթացը առավել իրավաչափ կլիներ, եթե համապատասխան անձի և հանցավոր ենթամշակույթ հարող անձանց շփումը, կապը հիմնավորվեր որևէ իրավական փաստաթղթով, ինչը լեգիտիմություն կհաղորդի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեությանը, հատկապես Եվրոպայի խորհրդի կառույցների առջև:

ԳՐԵԿՈՒ-ի զեկույցի համաձայն՝ հանցավոր կազմակերպությունում ներգրավածությունը պետք է հստակ սահմանվի, տարակարծիք մեկնաբանությունների տեղիք չտա: Միևնույն ժամանակ, ազգային անվտանգության ծառայության ներգրավումը տեղեկատվության հավաքման գործընթացին, կարելի է փոխարինել տեղեկատվական բազաներում առկա տեղեկատվության հավաքագրմամբ: Իսկ ազգային անվտանգության ծառայության կողմից նման տեղեկատվության հավաքագրումը, ստուգումների իրականացումը պետք է իրականացվի այնպիսի չափորոշիչների հիման վրա, որոնք կարելի է գնահատել:

Առաջարկվող կարգավորման բնույթը:

Վերոնշյալ խնդիրներին լուծում տալու համար «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համապատասխան գլխում նախատեսվում է իրականացնել մի շարք փոփոխություններ: Նախագծով վերանայվել է հայտարարատու պաշտոնատար անձանց ցանկը: Առաջարկվում է հայտարարագրման պարտականություն նախատեսել նաև Երևան համայնքի աշխատակազմի

քարտուղարի, Երևան համայնքի ավագանու անդամների համայնքների Ե. աշխատակազմի քարտուղարների համար: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով հայտարարագրերի ստուգման և վերլուծության գործընթացով պայմանավորված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ծանրաբեռնվածությունը՝ առավել նպատակահարմար է այս փուլում համայնքի ավագանու անդամների համար հայտարարագրման պարտականություն սահմանելիս որպես չափորոշիչ սահմանել 15 000 և ավելի բնակչություն ունենալու հանգամանքը: Նախագծով առաջարկվում է սահմանել պաշտոնատար անձի կողմից փաստացի տիրապետվող անշարժ գույքը, տրանսպորտային միջոցները, թանկարժեք գույքը հայտարարագրելու պահանջ, ինչը հնարավորություն կտա հայտարարագրման վերաբերյալ վերոնշված խնդիրները լուծել: Առաջարկվում է ընդլայնել նաև գույքի հայտարարագրման ժամանակ ներկայացվող տեղեկատվության շրջանակը: Տեղեկատվություն է ներկայացվում նաև անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի, արժեթղթերի ձեռքբերման գործարքի արժեքի, գործարքի մյուս կողմի վերաբերյալ, ինչպես նաև սահմանվել է բանկային ավանդի և բանկային հաշվի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ներկայացնելու պահանջ: Առաջարկվում է նվազեցնել Օրենքով սահմանված թանկարժեք գույքի դրամական շեմը: Առաջարկվում է ներդնել ծախսերի հայտարարագրման ինստիտուտ: Նաև առաջարկվում է սահմանել հայտարարագրման ենթակա ծախսերի տեսակները և ծախսերի վերաբերյալ ներկայացվող տեղեկատվության շրջանակը: Դրա շնորհիվ լիազոր մարմինը հնարավորություն կունենա ստանալու ամբողջական տեղեկատվություն հայտարարատու պաշտոնատար անձի գույքային դրության վերաբերյալ և կնպաստի հնարավոր խախտումների բացահայտմանը: Առաջարկվում է տարանջատել հայտարարագրման ենթակա եկամուտների որոշ տեսակներ, մասնավորապես՝ ստացված վարկերը և փոխառությունները: Սա պայմանավորված է նշված երկու եկամուտների տեսակների բովանդակային տարբերությամբ: Միաժամանակ հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունների դադարեցումից հետո կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով առաջարկվում է ներդնել մեխանիզմ, որի համաձայն հաջորդող 2 տարվա ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հնարավորություն կունենա անձից գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր

պահանջելու:

Նախագծով առաջարկվում է նաև սահմանել նորմ, առ այն, որ հայտարարատու պաշտոնատար անձը, նրա ընտանիքի անդամը հանձնված և չիրապարակված հայտարարագրում իրենց հայտնաբերած անհամապատասխանությունը վերացնելու նպատակով հայտարարագիրը հանձնելուց հետո չորսօրյա ժամկետում հայտարարագրում ուղղում կատարելու հնարավորություն կունենան:

Նախագծով թեկնածուներին հնարավորություն է ընձեռվել ներգրավվելու բարեվարքության ստուգման գործընթացին: Հանձնաժողովին վերապահվել է թեկնածուից պարզաբանումներ պահանջելու և ստանալու իրավագործություն, ինչպես նաև սահմանվել է, թե ինչ է ներառում քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրությունը՝ պրակտիկ խնդիրներից խուսափելու նպատակով:

Նախագծով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն օժտվել է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին դիմելու և անհրաժեշտ տեղեկություններ ստանալու իրավասությամբ՝ հայտարարագրերի վերլուծության ընթացքում գույքի փաստացի տիրապետումը ստուգելու և քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրության նպատակով: Այս առումով, հարկ է նշել, որ հայտարարագրերի վերլուծության ընթացքում գույքի փաստացի տիրապետումն ստուգելն ուղղված է հանցագործությունների (այդ թվում՝ հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը, ապօրինի հարստացում) հայտնաբերմանը, բացահայտմանը, կանխմանը և խափանմանը, իսկ քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրությունը բխում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների՝ ազգային անվտանգության մարմիններում և ոստիկանությունում, **ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում այլ պետական մարմիններում**, աշխատանքի անցնելու համար դիմում ներկայացրած անձանց ուսումնասիրելու համար տեղեկություններ հավաքելու նպատակից: Հատկանշական է, որ այս պարագայում առավել հստակ կարգավորում ունենալու նպատակով հստակ շեշտադրվել է, որ տվյալ նպատակն իրացվելի է նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքերում բարեվարքության ստուգման դեպքում:

Ընդ որում, հաշվի առնելով «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի ընդհանուր տրամաբանությունը, ակնհայտ է, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի դիմելու դեպքում իրավասու են լինելու իրականացնել բացառապես «օպերատիվ հարցում» և «օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում» օպերատիվ-հետախուզական միջոցառումները, ինչը որևէ կերպ չի ենթադրում գործող օրենդրական կարգավորումներից բացի այլ մատչելիություն ֆինանսական տվյալներին:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից:

Ակնկալվող արդյունքը

Սույն փոփոխությամբ ակնկալվում է կատարելագործել հայտարարագրման ինստիտուտը, ինչը հնարավորություն կտա ապահովել հայտարարատու պաշտոնատար անձանց գործունեության թափանցիկությունը: Հայտարարագրման ենթակա տեղեկատվության, հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց վերանայված շրջանակն ապահովելու է հայտարարատու պաշտոնատար անձի գույքային դրության վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն, ինչը հնարավոր խախտումների բացահայտման արդյունավետ գործիք է: